

ամենայն աւագանեան յանձն առեալ հաւանեցան բանիցն, եւ շնորհեալ նոցա գժամակալութեան ինդիրն՝ արծակեցին գատեանս:

ԻԷ. Յայնժամ ի մի վայր ժողովեալ նախարարացն ամենեցուն, որք էին յերեցունց աշխարհացն, Յայոց, Վրաց եւ Աղուանից, եւ տարակուսեալք յանձինս իւրեանց, խորհուրդ ի մէջ առեալ, թէ զինչպիսի հնարիւք եւ մտածութեամբ ելս իրացն կարասցեն գտանել: 2 Եւ յածեցուցեալ զմիտս ի բազում յուզմունս ինդրոց զսակաւ աւուրս՝ յայս միտս առ վայր մի հաւանեցան եւ հաստատեցան, եթէ «այլ ոչ ինչ գոյ մեզ հնար գերծանել յորոգայթես, զոր ձգեալ չար որսորդին սատանայի պաշարեաց զմեզ՝ բայց եթէ առ ժամ մի յանձն առնումք պատճառանաւք զիրամայեալս նոցա. եւ երթեալ յիւրաքանչիւր յաշխարհի՝ այնուհետեւ կամ կեամք, ծառայելով ճշմարիտ հաւատոյն Զրիստոսի, յոր ծնաք աւագանին նորոգութեամբ ի ձեռն ամենասուրբ վարդապետութեան նահատակին Գրիգորի եւ նորին զաւակի, եւ կամ թողեալ զաշխարհ՝ գնամք իւրաքանչիւր յաւտարութիւն² կնաւ եւ որդուլք, ապաւինեալք եւ հաստատեալք ի բան կենարար Փրկչին, որ ասէ, թէ *Յորժամ հալածեսցեն զձեզ ի քաղաքս յայսմանէ՝ փախիջիք ի միւսն*»³: 3 Ապա եթէ զանձանց միայն զփրկութիւն եղեալք ի մոի, ընդդիմանամք անաւրէն հրամանաց իշխանին՝ անթիւ բազմութեան արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց լինիմք պատճառ յաւիտենից կորստեանս. զորս խաղացուցեալ այսր՝ զբնաւս ծառայեցուցանեն անաւրէնութեանց պաշտամանց ազգաց յազգս»:

4 Արդ՝ թեպէտ եւ ածեալ ուրուք զմտաւ զայսպիսի որոշողութեամբ առանձինն, եւ զնոյնս դարձեալ խորհեալք միաբանութեամբ առ միմեանս զաւուրս սակաւս զցայգ եւ զցերեկ՝ սակայն ոչ իշխէին յայտնել զաւրավարին Յայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից զմտածութիւն միաբանութեան իւրեանց. ճանաչելով ի միտս իւրեանց, թէ նմա ոչ է հնար յանձն առնուլ եւ հաւանել այսպիսի խորհրդոյ, ունելով անշարժ³ զհաւատ հոգւոյն իւրոյ ի վերայ հաստատնոյ վիմին Զրիստոսի: 5 Բայց սակայն զյայտնելն⁴ նմա եւ չպատմել զայս ամենայն՝ չկարէին հանդուրժել. քանզի գիտէին, եթէ առանց նորա ամենայն խորհեալքն ի նոցանէ եւ պատճառադրութիւնք եւ արարուածք՝ թերիք են եւ անկատարք: 6 Չի թեպէտ եւ կարծէին լինել կարող, ըստ պատճառախնդիր խորհելոցն, զերծանել խաբէութեամբ եւ գողանալ զմիտս թագաւորին եւ զամենայն Արեաց հրապարակին, եւ դառնալ յիւրաքանչիւր յեր-

1 ՏՏ. իւրաքանչիւր յաշխարհ

2 Զ. յիւրաքանչիւր յօտարութիւն

Ս Մատթ. Ժ 23

3 Գտ. զանշարժ

4 Ատ. յայտնելն. ԲԳտ. ուղղագրել են յայտնել